ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.11.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/262

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Երևանի Ա. Չեխովի անվան թիվ 55 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
Մասնակից՝ «Գարդիան» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«55ԴՊ-ԳՀԾՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, պահնորդական ծառայությունների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «55ԴՊ-ԳՀԾՁԲ-20/1»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 13.11.2020թ.-ի թիվ 26/26-1/16934-2020 գրությամբ «Գարդիան» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի Ա. Չեխովի անվան թիվ 55 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) 06.11.2020թ. թիվ 239 գրության հիման վրա, 13.11.2020թ.-ին «Գարդիան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 13.11.2020թ.-ին:

13.11.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/262 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 13.11.2020թ.-ին:

2. «Երևանի Ա. Չեխովի անվան թիվ 55 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Երևանի Ա. Չեխովի անվան թիվ 55 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը 06.11.2020թ. թիվ 239 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել է հետևյալը.

««ԵՐԵՎԱՆԻ Ա.ՉԵԽՈՎԻ ԱՆՎԱՆ Հ. 55 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «ԳԱՐԴԻԱՆ» ՍՊԸ-ի միջև 30.12.2019թ. կնքված 55ԴՊ-ԳՀԾՁԲ-20/1 պայմանագրի շրջանակներում «ԳԱՐԴԻԱՆ» ՍՊ ընկերության կողմից տեղի է ունեցել պայմանագրի պայմանների էական խախտում: Հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի, Պայմանագրի 2.1.3 կետի ա) ենթակետի 3.2, 3.3 և 7.11 կետերի դրությունները և հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված բացասական եզրակացությունը՝ Պատվիրատուի կողմից 04.11.2020թ.-ին վերոնշյալ պայմանագիրը միակողմանի լուծվել է:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ

կետի պահանջները, կից ներկայացվել է «55ԴՊ-ԳՀԾՁԲ-20/1» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Գարդիան» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Գարդիան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 13.11.2020թ.-ի գրությամբ դիմել է «Գարդիան» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.11.2020թ.-ի թիվ 26/26-1/16934-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով 26.11.2020թ.-ին հրավիրված նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, 18.11.2020թ.-ին ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«30.12.2019թ. «Երևանի Ա Չեխովի անվան հ. 55 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի, հետագայում՝ «Կազմակերպություն», և «Գարդիան ՍՊԸ-ի, հետագայում՝ «Ընկերություն», միջև կնքվել է Պահնորդական ծառայությունների մատուցման պետական գնման N 55 ԴՊ-ԳՀԾՁԲ-20/1 պայմանագիրը, հետագայում՝ «Պայմանագիր»:

04.11.2020թ. ընկերությունը ստացել է Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ N 10 եզրակացությունը և Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

13.11.2020թ. ընկերությունը ստացել է ծանուցում ՀՀ ֆինանսների նախարարության 13.11.2020թ. թիվ 26/26-1/16934-2020 գրությամբ «Գարդիան ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնած ընթացակարգի վերաբերյալ:

Հայտնում ենք, որ համաձայն չենք 04.11.2020թ. Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ N 10 եզրակացության արդյունքների հետ հետևյալ հիմնավորումներով.

Եզրակացության, իսկ այնուհետև Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցման հիմքում կազմակերպության կողմից դրվել է այն հանգամանքը, որ ընկերության կողմից թույլ է տրվել Պայմանագրի պայմանների էական խախտում:

Մասնավորապես կազմակերպությունը նշել է, որ «... Պահպանությունը իրականացնող պահնորդը պետք է ունենա պահնորդի որակավորում, տիրապետի իրեն վերապահված պարտականություններին և ունակ լինի՝ ի թիվս այլնի,

Պարեկության միջոցով ողջամիտ ժամկետում կանխարգելելու, կանխելու, կասեցնելու և խափանելու տարածքում իրավախախտումները,

Ներկայացնելու զեկուցագրեր՝ ներառելով միջադեպերի, իրավախախտումների, պատահարների դեպքերը և այլ վերաբերելի փաստեր:»

Ընդ-որում կազմակերպությունը չի հստակեցրել, թե կոնկրետ որ պայմանն է խախտվել ընկերության կողմից. Այսպես՝ համադրելով պայմանագրի պայմանները դրամահավաքի համար նախատեսված արկղից ըստ կազմակերպության պնդման 1.200.000 ՀՀ դրամի կորստի փաստին՝ կազմակերպությունը նշել է, որ պայմանագրի խախտումը դրսևորվել է կամ նրանով, որ կորստի փաստը դուրս է մնացել պարեկություն իրականացնող աշխատակցի տեսադաշտից, կամ նրանով, որ այդ մասին չի ներկայացվել համապատասխան զեկուցագիր և չի տեղեկացվել նաև կազմակերպության տնօրենը և աշխատակազմը:

1. Ինչ վերաբերվում է այն փաստարկին, որ գումարի կորստի փաստը դուրս է մնացել պարեկություն իրականացնող աշխատակցի տեսադաշտից, ինչով ըստ կազմակերպության՝ խախտվել է պահնորդի կողմից իրավախախտումները ողջամիտ ժամկետում տարածքում կանխարգելելու, կանխելու, կասեցնելու և խափանելու պարտականությունը, ապա հարկ է նշել հետևյալը.

Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ի համաձայն՝

«Պահպանությունը իրականացնող պահնորդը պետք է ունենա պահնորդի որակավորում, տիրապետի իրեն վերապահված պարտականություններին և ունակ լինի

...

Պարեկության միջոցով ողջամիտ ժամկետում կանխարգելելու, կանխելու, կասեցնելու և խափանելու տարածքում իրավախախտումները»

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 813-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պահպվության պայմանագրով մի կողմը (պահառուն) պարտավորվում է պահել մյուս

կողմի (պահատուի) կողմից իրեն հանձնված գույքը և այն վերադարձնել պահպանված վիճակում:

Արկղը տեղադրված է եղել համապատասխան վայրում փակված և կնիքված/պլոմբված/: Պահնորդը եղել է շենքի ներսում և պատշաճ իրականացրել է իր պարտականությունները. որևէ միջադեպ, պատահար կամ իրավախախտում տեղի չի ունեցել: 21.10.2020թ. տնօրենի կողմից արկղը վերցվել է տեղադրված վայրից և այդ ժամանակ արկղը դեռևս փակված էր և խախտված չէր կնիքի ամբողջականությունը: Արկղը վերցնելուց հետո տնօրենը հայտնում է գումարի պակասի մասին ընկերության տնօրենին, որից հետո ընկերության տնօրենը նշվածի վերաբերյալ ներկայացնում է հաղորդում ՀՀ ոստիկանություն:

Այսպիսով՝ ընկերության աշխատակցի կողմից Պայմանագրով նախատեսված պարտականությունները կատարվել են պատշաճ և ընկերությունը ի դեմս իր աշխատակցի չի խախտել թե Եզրակացության մեջ վկայակոչված պարտականությունը, թե Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ով սահմանված իր այլ պարտականությունները: Մասնավորապես՝ տեղի չի ունեցել որևէ իրավախախտում, պատահար կամ միջադեպ պահնորդի կողմից իր պարտականությունները իրականացնելու ընթացքում: Պահնորդի կողմից իր պարտականությունները պատշաճ կատարելու մասին է վկայում նաև այն, որ արկղը տնօրենի կողմից 21.10.2020թ.-ից վերցնելիս եղել է փակված և կնիքված, դրա վրա առկա չեն եղել վնասվածքներ, այսինքն՝ պահնորդը պատշաճ իրականացրել է հսկողություն այդ թվում նաև արկղի նկատմամբ:

Ինչ վերաբերում է արկղի պարունակությանը ապա պետք է փաստել, որ Ընկերությունը և ընկերության աշխատակիցները Պայմանագրով չեն պարտավորվել պահպանության ծառայություններ իրականացնել արկղում գտնվող գումարների և դրանց մուտքի նկատմամբ, տեղյակ չեն եղել գումարի չափի վերաբերյալ և իրավասություն չեն ունեցել արկղը բացելու կամ գումարի նկատմամբ հսկողություն իրականացնելու, հետևաբար գումարի կորստի փաստը չի կարող համարվել ընկերության կողմից պայմանագրային պարտավորությունների խախտում:

Ավելին՝ վիճելի է նաև արկղում գտնվող գումարի չափը, քանի որ արկղը տեղադրված է եղել բարեգործական նպատակներով, ցանկացած անձ կարող էր ցանկացած չափով գումար գցել արկղում և որևէ մեկի կողմից չի վերահսկվել գումարների մուտքը:

Ստացվում է, որ կազմակերպության այն պնդումը, թե գումարի կորստի փաստը վկայում է Ընկերության կողմից պայմանագրի էական խախտման մասին, /մասնավորապես՝ պահնորդի կողմից իրավախախտումները ողջամիտ ժամկետում տարածքում կանխարգելելու, կանխելու, կասեցնելու և խափանելու պարտականության խախտման մասին/, անհիմն է, քանի որ արկղը վերցնելու պահին այն եղել է փակված և կնիքված, նրա ամբողջականությունը վնասված չի եղել, իսկ ինչ վերաբերում է դրանում եղած գումարի կորստին, ապա գումարի նկատմամբ պահնորդական ծառայություններ իրականացնելու վերաբերյալ պայմանագիր կողմերի միջև երբևէ չի կնքվել և ընկերությունը չի կարող պատասխանատվություն կրել գումարի կորստի համար:

2. Ինչ վերաբերվում է այն փաստարկին, որ ընկերության կամ նրա աշխատակցի կողմից չի ներկայացվել զեկուցագիր, ապա պետք է փաստել հետևյալը.

Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ի համաձայն՝ «Պահպանությունը իրականացնող պահնորդը պետք է ունենա պահնորդի որակավորում, տիրապետի իրեն վերապահված պարտականություններին և ունակ լինի՝

ներկայացնելու զեկուցագրեր՝ ներառելով միջադեպերի, իրավախախտումների, պատահարների դեպքերը և այլ վերաբերելի փաստեր:»

Ինչպես արդեն նշվեց, որևէ պատահար, միջադեպ կամ իրավախախտում ընկերության աշխատակցի կողմից չի արձանագրվել և անհասկանալի է, թե ինչի մասին պետք է զեկուցեր ընկերությունը:

Ինչ վերաբերում է գումարի կորստի փաստին, ապա այդ մասին ընկերության աշխատակիցը չէր կարող տեղյակ լիներ, քանի որ ինչպես նշվեց ընկերությունը երբևէ չի պարտավորվել հսկողություն իրականացնել արկղի ներսում գտնվող գումարի նկատմամբ, արկղը մշտապես գտնվել է փակված և կնիքված վիճակում և ընկերությունը և նրա աշխատակիցը տեղյակ չեն եղել դրա ներսում գտնվող գումարի չափի վերաբերյալ: Ավելին՝ գումարի չափը առհասարակ որևէ մեկին հայտնի չի եղել, քանի որ արկղը եղել է մշտապես փակ և համալրվող գումարների մուտքը, որը կրել է կամավոր բնույթ, որևէ մեկի կողմից չի վերահսկվել և հաշվարկվել:

Բացի այդ գումարի կորստի մասին առաջինը իմացել է հենց դպրոցի տնօրենը, ինչից հետո այդ մասին հայտնել է ընկերության տնօրենին, ով նշվածի առթիվ ներկայացրել է հաղորդում ՀՀ ոստիկանություն և ներկայումս քննվում է քրեական գործ:

Այդ պարագայում եթե անգամ ընդունենք, որ ընկերությունը պարտավոր էր զեկուցագիր ներկայացնել, ապա նախ՝ հաշվի առնելով վերոգրյալը վերանում է զեկուցագիր ներկայացնելու անհրաժեշտությունը, երկրորդ՝ Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելվածով նախատեսելով ընկերության կողմից զեկուցագիր ներկայացնելու պարտականությունը, նշված չէ թե ինչ ժամկետներում այն պետք է ներկայացվի և այն ընդհուպ մինչև այսօր էլ կարող է ներկայացվել:

Ստացվում է, որ կազմակերպության այն պնդումը, թե զեկուցագիր չներկայացնելը վկայում է Ընկերության կողմից պայմանագրի էական խախտման մասին, նույնպես անհիմն է, քանի որ 1. որևէ միջադեպ, իրավախախտում կամ պատահար, որը գտնվում էր պահնորդի պատասխանատվության տակ, տեղի չի ունեցել 2. գումարի կորստի մասին առաջինը տեղեկացել է դպրոցի տնօրենը, ընկերության աշխատակիցը մինչ այդ տեղյակ չի եղել և չէր էլ կարող տեղյակ լինել, քանի որ գումարի պահպանությունը պայմանագրով ընկերությանը վստահված չի եղել, հետևաբար անտրամաբանական է գումարի կորստի փաստի վերաբերյալ ընկերությունից կամ ընկերության աշխատակցից զեկուցագիր պահանջելը:

Այսպիսով ապացուցված չէ Կազմակերպության կողմից Ընկերությանը վերագրվող՝ պայմանագրի պայմանների խախտման փաստը:

04.11.2020թ-ին N 10 եզրակացությունը և Պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը ոչ իրավաչափ են և կազմակերպությունը չի ունեցել իրավական հիմքեր պայմանագիրը միակողմանի լուծելու համար, ուստի՝ առկա չեն հիմքեր ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն, որ «Գարդիան» ՍՊԸ-ի կողմից N 55 ԴՊ-ԳՀԾՁԲ-20/1 պայմանագրի պայմանների խախտումների փաստը առկա չէ և Պայմանագիրը միակողմանի լուծումը ոչ իրավաչափ է խնդրում ենք Ձեզ

1. պարտավորեցնել «Երևանի Ա Չեխովի անվան հ. 55 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին, ոչ իրավաչափ ճանաչել 04.11.2020թ-ին N 10 եզրակացությունը և Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը.

2. չներառել «Գարդիան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:»:

4. <u>ՍՑ-LO-2020/262 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Երևանի Ա. Չեխովի անվան թիվ 55 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Գարդիան» ՍՊԸ-ի միջև 30.12.2019թ.-ին կնքվել է թիվ «55ԴՊ-ԳՀԾՁԲ-20/1» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1 և 1.2 կետերի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է պահնորդական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների: Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

iii. Պայմանագրի թիվ 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով 1-ին չափաբաժնով սահմանված «անվտանգության ապահովման ծառայություններ (պահնորդային ծառայություններ)» ծառայության համար, ի թիվս այլնի, սահմանվել է նաև, որ Մասնակիցը պահնորդական ծառայության ընթացքում պետք է իրականացվի 24 ժամյա ֆիզիկական պահպանություն առնվազն մեկ պահնորդի միջոցով: Պահպանությունն իրականացնող պահնորդը պետք է ունենա պահնորդի որակավորում, տիրապետի իրեն վերապահված պարտականություններին և ունակ լինի պարեկության միջոցով ողջամիտ ժամկետում կանխարգելելու, կանխելու, կասեցնելու և խափանելու պահպանվող տարածքում իրավախախտումները, իրականացնի հասարակական կարգի պահպանում, ներկայացնի զեկուցագրեր՝ ներառելով միջադեպերի, իրավախախտումների, պատահարների դեպքերը և այլ վերաբերելի փաստեր, անվտանգության խախտման կամ դրա անմիջական սպառնալիքի դեպքում անմիջապես ձեռնարկի անհրաժեշտ միջոցներ՝ այդ մասին անհապաղ տեղեկացնելով պահպանվող օբյեկտի ղեկավարին ինչպես նաև իրավապահ մարմիններին, կատարի ամենօրյա շրջայց շենքի ներսում և տարածքում՝ աշխատանքի ավարտից հետո, կատարի պահպանվող տարածքի անվտանգության ապահովման գործառույթներ՝ համաձայն դպրոցի կանոնակարգի կամ ղեկավարի

հանձնարարությամբ: Ինչպես նաև սահմանվել է, որ Պահնորդական ծառայությունն իրականացվելու է մեկ պահակակետում շուրջօրյա, առնվազն մեկ պահնորդի միջոցով, առանց հանգստյան և տոնական օրերի, շաբաթական յոթ օր, քսանչորս ժամ, պահպանման ենթակա տարածք է հանդիսանում «Երևանի Ա. Չեխովի անվան թիվ 55 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի վարչական շենքը (հատակագիծը կցվում է) և ցանկապատված ընդհանուր տարածքը, որը գտնվում է ք. Երևան, Բաղրամյան 16 հասցեում: Նշված բոլոր պայմանները պարտադիր են և պետք է իրականացվեն պահնորդական ծառայությունը մատուցողի կողմից: Պահնորդական ծառայություն մատուցողը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն կկրի այն վնասի համար, որը նրա կողմից անհրաժեշտ անվտանգության և պահպանության միջոցառումներ չիրականացնելու հետևանքով կհասցվի Պատվիրատուին:

iv. «Երևանի Ա. Չեխովի անվան թիվ 55 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի գնման հայտը նախագծած ներկայացուցիչ Ս. Նասխուլյանի կողմից պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ 04.11.2020թ.-ին կազմված թիվ 10 եզրակացության (այսուհետ նաև՝ Եզրակացություն) համաձայն՝ հաշվի առնելով «Երևանի Ա. Չեխովի անվան թիվ 55 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի և «Գարդիան» ՍՊԸ միջև 30.12.2019 թվականին կնքված 55ԴՊ-ԳՀԾՁԲ-20/1 պայմանագրի 2.1.3 կետի «ա» ենթակետի և հավելված 1-ով հաստատված ծառայությունների տեխնիկական բնութագրի դրույթները, ինչպես նաև 21.10.2020 թվականին «Երևանի Ա. Չեխովի անվան թիվ 55 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում արձանագրված դեպքը՝ անվտանգության աշխատակցի ծառայության իրականացման համար նախատեսված սենյակի հարևանությամբ տեղադրված և դրամահավաքի համար նախատեսված արկղից մոտ 1200000 ՀՀ դրամ գումարի կորստի փաստը, ինչպես նաև այդ մասին «Գարդիան» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա. Գևորգյանի կողմից ՀՀ իրավապահ մարմիններին հաղորդում ներկայացնելու փաստը, ՊՈԱԿ-ի գնման հայտը նախագծած ներկայացուցիչը գտել է, որ թույլ է տրվել Պայմանագրի պայմանների էական խախտում, մասնավորապես՝ «Գարդիան» ՍՊԸ-ի կողմից չեն պահպանվել Պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված հետևյալ դրույթները՝ Պահնորդական ծառայության ընթացքում պետք է իրականացվի 24 ժամյա ֆիզիկական պահպանություն առնվազն մեկ պահնորդի միջոցով: Պահպանությունն իրականացնող պահնորդը պետք է ունենա պահնորդի որակավորում, տիրապետի իրեն վերապահված պարտականություններին և ունակ լինի՝ ի թիվս այլնի,

✓ պարեկության միջոցով ողջամիտ ժամկետում կանխարգելելու, կանխելու, կասեցնելու և խափանելու տարածքում իրավախախտումները,

✓ ներկայացնի զեկուցագրեր՝ ներառելով միջադեպերի, իրավախախտումների, պատահարների դեպքերը և այլ վերաբերելի փաստեր:

Եզրակացությամբ արձանագրվել է նաև, որ անվտանգության աշխատակցի ծառայության իրականացման համար նախատեսված սենյակի հարևանությամբ տեղադրված և դրամահավաքի համար նախատեսված արկղից մոտ 1200000 ՀՀ դրամ գումարի կորստի փաստն արձանագրվել է «Երևանի Ա. Չեխովի անվան թիվ 55 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի կողմից, որի մասին «Գարդիան» ՍՊ ընկերությունից բացատրություններ պահանջելուց հետո նույն ընկերության տնօրենը ներկայացրել է հաղորդում ՀՀ իրավապահ մարմիններին: Արդյունքում՝ անվտանգության աշխատակցի ծառայության իրականացման համար նախատեսված սենյակի հարևանությամբ տեղադրված և դրամահավաքի համար նախատեսված արկղից ՀՀ դրամ գումարի կորստի փաստը կամ դուրս է մնացել պարեկություն իրականացնող աշխատակցի տեսադաշտից, որի արդյունքում պատշաճ չի իրականացվել անմիջապես իր հարևանությամբ գտնվող արկղից գումարի կորստի փաստը կամ այդ մասին չի ներկայացվել համապատասխան զեկուցագիր և չի տեղեկացվել նաև ՊՈԱԿ-ի տնօրենը և/կամ աշխատակազմը:

Վերոգրյալով պայմանավորված՝ ՊՈԱԿ-ի գնման հայտը նախագծած ներկայացուցիչը գտել է, որ «Գարդիան» ՍՊԸ-ի կողմից թույլ է տրվել վերջինիս և Պատվիրատուի միջև 30.12.2019թ.-ին կնքված 55ԴՊ-ԳՀԾՁԲ-20/1 պայմանագրի էական պայմանների խախտում և ուստի տրվել է բացասական եզրակացություն:

v. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 04.11.2020թ.-ին հրապարակված «55ԴՊ-ԳՀԾՁԲ-20/1» ծածկագրով պետական գնման պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ «Երևանի Ա. Չեխովի անվան թիվ 55 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի և «Գարդիան» ՍՊԸ-ի միջև 30.12.2019թ.-ին կնքված թիվ «55ԴՊ-ԳՀԾՁԲ-20/1» ծածկագրով պետական գնման պայմանագիրը «Երևանի Ա. Չեխովի անվան թիվ 55 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից միակողմանի լուծվել է՝ հիմք ընդունելով գնման հայտը նախագծած ներկայացուցիչ Ս. Նասխուլյանի կողմից պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ 04.11.2020թ.-ին կազմված թիվ 10 եզրակացությունը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.11.2020թ.-ի թիվ 26/26-1/16934-2020 գրությամբ «Գարդիան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար

պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 և 1.2 կետերի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է պահնորդական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների: Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունն անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Երևանի Ա. Չեխովի անվան թիվ 55 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի և «Գարդիան» ՍՊԸ-ի միջև 30.12.2019թ.-ին կնքված թիվ «55ԴՊ-ԳՀԾՁԲ-20/1» ծածկագրերով պետական գնման պայմանագրի թիվ 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով 1-ին չափաբաժնով սահմանված «անվտանգության ապահովման ծառայություններ (պահնորդային ծառայություններ)» ծառայության համար, ի թիվս այլնի, սահմանվել է նաև, որ Մասնակիցը պահնորդական ծառայության ընթացքում պետք է իրականացվի 24 ժամյա ֆիզիկական պահպանություն առնվազն մեկ պահնորդի միջոցով: Պահպանությունն իրականացնող պահնորդը պետք է ունենա պահնորդի որակավորում, տիրապետի իրեն վերապահված պարտականություններին և ունակ լինի

պարեկության միջոցով ողջամիտ ժամկետում կանխարգելելու, կանխելու, կասեցնելու և խափանելու պահպանվող տարածքում իրավախախտումները, իրականացնի հասարակական կարգի պահպանում, ներկայացնի զեկուցագրեր՝ ներառելով միջադեպերի, իրավախախտումների, պատահարների դեպքերը և այլ վերաբերելի փաստեր, անվտանգության խախտման կամ դրա անմիջական սպառնալիքի դեպքում անմիջապես ձեռնարկի անհրաժեշտ միջոցներ՝ այդ մասին անհապաղ տեղեկացնելով պահպանվող օբյեկտի ղեկավարին ինչպես նաև իրավապահ մարմիններին, կատարի ամենօրյա շրջայց շենքի ներսում և տարածքում՝ աշխատանքի ավարտից հետո, կատարի պահպանվող տարածքի անվտանգության ապահովման գործառույթներ՝ համաձայն դպրոցի կանոնակարգի կամ ղեկավարի հանձնարարությամբ: Ինչպես նաև սահմանվել է, որ Պահնորդական ծառայությունն իրականացվելու է մեկ պահակակետում շուրջօրյա, առնվազն մեկ պահնորդի միջոցով, առանց հանգստյան և տոնական օրերի, շաբաթական յոթ օր, քսանչորս ժամ, պահպանման ենթակա տարածք է հանդիսանում «Երևանի Ա. Չեխովի անվան թիվ 55 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի վարչական շենքը (հատակագիծը կցվում է) և ցանկապատված ընդհանուր տարածքը, որը գտնվում է ք. Երևան, Բաղրամյան 16 հասցեում: Նշված բոլոր պայմանները պարտադիր են և պետք է իրականացվեն պահնորդական ծառայությունը մատուցողի կողմից: Պահնորդական ծառայություն մատուցողը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն կկրի այն վնասի համար, որը նրա կողմից անհրաժեշտ անվտանգության և պահպանության միջոցառումներ չիրականացնելու հետևանքով կհասցվի Պատվիրատուին:

«Երևանի Ա. Չեխովի անվան թիվ 55 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի գնման հայտը նախագծած ներկայացուցիչ Ս. Նասխուլյանի կողմից պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ 04.11.2020թ.-ին կազմված թիվ 10 եզրակացության (այսուհետ նաև՝ Եզրակացություն) համաձայն՝ հաշվի առնելով «Երևանի Ա. Չեխովի անվան թիվ 55 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի և «Գարդիան» ՍՊԸ-ի միջև 30.12.2019 թվականին կնքված 55ԴՊ-ԳՀԾՁԲ-20/1 պայմանագրի 2.1.3 կետի «ա» ենթակետի և հավելված 1-ով հաստատված ծառայությունների տեխնիկական բնութագրի դրույթները, ինչպես նաև 21.10.2020 թվականին «Երևանի Ա. Չեխովի անվան թիվ 55 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում արձանագրված դեպքը՝ անվտանգության աշխատակցի ծառայության իրականացման համար նախատեսված սենյակի հարևանությամբ տեղադրված և դրամահավաքի համար նախատեսված արկղից մոտ 1200000 ՀՀ դրամ գումարի կորստի փաստը, ինչպես նաև այդ

մասին «Գարդիան» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա. Գևորգյանի կողմից ՀՀ իրավապահ մարմիններին հաղորդում ներկայացնելու փաստը, ՊՈԱԿ-ի գնման հայտը նախագծած ներկայացուցիչը գտել է, որ թույլ է տրվել Պայմանագրի պայմանների էական խախտում, մասնավորապես՝ «Գարդիան» ՍՊԸ-ի կողմից չեն պահպանվել Պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված հետևյալ դրույթները՝ Պահնորդական ծառայության ընթացքում պետք է իրականացվի 24 ժամյա ֆիզիկական պահպանություն առնվազն մեկ պահնորդի միջոցով: Պահպանությունն իրականացնող պահնորդը պետք է ունենա պահնորդի որակավորում, տիրապետի իրեն վերապահված պարտականություններին և ունակ լինի՝ ի թիվս այլնի,

- ✓ պարեկության միջոցով ողջամիտ ժամկետում կանխարգելելու, կանխելու, կասեցնելու և խափանելու տարածքում իրավախախտումները,
- ✓ ներկայացնի զեկուցագրեր՝ ներառելով միջադեպերի, իրավախախտումների, պատահարների դեպքերը և այլ վերաբերելի փաստեր:

Եզրակացությամբ արձանագրվել է նաև, որ անվտանգության աշխատակցի ծառայության իրականացման համար նախատեսված սենյակի հարևանությամբ տեղադրված և դրամահավաքի համար նախատեսված արկղից մոտ 1200000 ՀՀ դրամ գումարի կորստի փաստն արձանագրվել է «Երևանի Ա. Չեխովի անվան թիվ 55 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի կողմից, որի մասին «Գարդիան» ՍՊ ընկերությունից բացատրություններ պահանջելուց հետո նույն ընկերության տնօրենը ներկայացրել է հաղորդում ՀՀ իրավապահ մարմիններին: Արդյունքում՝ անվտանգության աշխատակցի ծառայության իրականացման համար նախատեսված սենյակի հարևանությամբ տեղադրված և դրամահավաքի համար նախատեսված արկղից ՀՀ դրամ գումարի կորստի փաստը կամ դուրս է մնացել պարեկություն իրականացնող աշխատակցի տեսադաշտից, որի արդյունքում պատշաճ չի իրականացվել անմիջապես իր հարևանությամբ գտնվող արկղից գումարի կորստի փաստը կամ այդ մասին չի ներկայացվել համապատասխան զեկուցագիր և չի տեղեկացվել նաև ՊՈԱԿ-ի տնօրենը և/կամ աշխատակազմը:

Վերոգրյալով պայմանավորված՝ ՊՈԱԿ-ի գնման հայտը նախագծած ներկայացուցիչը գտել է, որ «Գարդիան» ՍՊԸ-ի կողմից թույլ է տրվել վերջինիս և Պատվիրատուի միջև 30.12.2019թ.-ին կնքված 55ԴՊ-ԳՀԾՁԲ-20/1 պայմանագրի էական պայմանների խախտում և ուստի տրվել է բացասական եզրակացություն:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 04.11.2020թ.-ին հրապարակված «55ԴՊ-ԳՀԾՁԲ-20/1»

ծածկագրով պետական գնման պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ «Երևանի Ա. Չեխովի անվան թիվ 55 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի և «Գարդիան» ՍՊԸ-ի միջև 30.12.2019թ.-ին կնքված թիվ «55ԴՊ-ԳՀԾՁԲ-20/1» ծածկագրով պետական գնման պայմանագիրը՝ «Երևանի Ա. Չեխովի անվան թիվ 55 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից միակողմանի լուծվել է՝ հիմք ընդունելով գնման հայտը նախագծած ներկայացուցիչ Ս. Նասխուլյանի կողմից պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ 04.11.2020թ.-ին կազմված թիվ 10 եզրակացությունը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ, տվյալ դեպքում, Պայմանագրի թիվ 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով Մասնակցի վրա դրված այն պարտավորությունը, որ վերջինս պետք է ունակ լինի պարեկության միջոցով ողջամիտ ժամկետում կանխարգելելու, կանխելու, կասեցնելու և խափանելու պահպանվող տարածքում իրավախախտումները, ըստ էության, հստակ չէ: «Իրավախախտումներ» եզրույթը տարակերպ մեկնաբանության տեղիք է տալիս, որպիսի պայմաններում հնարավոր չէ ստույգ և ճշգրիտ որոշել ու գնահատել Մասնակցի վրա դրված պարտավորությունների պատշաճ կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ Պատվիրատուն նախաձեռնված ընթացակարգի շրջանակներում և այնուհետև քննության ժամանակ, Բողոքներ քննող անձին չներկայացրեց որևէ վերաբերելի կամ թույլատրելի ապացույց առ այն, որ դրամահավաքի համար նախատեսված արկղում առկա է եղել մոտ 1 200 000 ՀՀ դրամ գումարի չափով գումար: Ընդ որում, գումարի կորստի փաստը դեռ ենթակա է պարզման համապատասխան պատկան մարմինների կողմից, որի արդյունքում նոր միայն հնարավոր կլինի գնահատական տալ կատարվածի վերաբերյալ: Անգամ պետք է փաստել, որ գործում առկա նյութերով չի հիմնավորվում այն փաստը, որ Պատվիրատուի ղեկավարի կողմից պահպանվել է կապարակնիքված արկղի բացումը՝ ընդունված կարգերով (արձանագրություն, հանձնաժողով և այլն):

Անդրադառնալով Պայմանագրի լուծման մյուս՝ իրավախախտման վերաբերյալ Մասնակցի կողմից զեկուցագիր չներկայացնելու հիմքին, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ այն նույնպես իրավաչափ չէ, քանի որ զեկուցագրեր ներկայացնելու պարտականության իրականացման իմաստից բխում է, որ այն նպատակաուղղված է որոշակի հանգամանքների մասին Պատվիրատուին իրազեկելուն և

տեղեկացնելուն, իսկ սույն դեպքում գնման հայտը նախագծած ներկայացուցիչ Ս. Նասխուլյանի կողմից պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ 04.11.2020թ.-ին կազմված թիվ 10 եզրակացությամբ ամրագրվել է, որ գումարի կորստի փաստն արձանագրվել է ՊՈԱԿ-ի տնօրենի կողմից, որպիսի պայմաններում իրավախախտման մասին զեկուցագիր չներկայացնելը չի կարող հանդիսանալ էական նշանակություն ունեցող հանգամանք և այն կրում է զուտ ձևական բնույթ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 110-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ եթե պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրվել է բացասական եզրակացություն, ապա եզրակացությունն ստանալու օրը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը եզրակացությունը և իր կողմից չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով տրամադրում է պատվիրատուի ղեկավարին, որոնք վերջինս մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է պայմանագիր կնքած անձին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրն ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից սույն որոշմամբ նշված ապացույցների չներկայացման պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.11.2020թ.-ի թիվ 26/26-1/16934-2020 գրությամբ «Գարդիան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/262 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**